«Զաարատ Կապան» ՓԲԸ կողմից նախատեսվող Շահումյան բանավանի տարածքում 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Նախատեսվող գործունեություն) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.11.2022թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2022 թվականի նոյեմբերի 9-ին, ժամը 15:00-ին տեղի ունեցավ «Զաարատ Կապան» ՓԲԸ կողմից նախատեսվող Շահումյան բանավանի տարածքում 2020 թվականին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Նախատեսվող գործունեություն) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Զաարատ Կապան» ՓԲԸ վարչական տնօրեն՝ Էդգար Հովհաննիսյանը, գլխավոր տնօրենի խորհրդական՝ Արա Բարսեղյանը, հանրային կապերի մենեջեր՝ Արփինե Հարությունյանը, բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 187 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի /kapan.am/ հայտարարությունների բաժնում:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Զաարատ Կապան» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանին:

Զեկույց (Աիդա Ալեքսանյան)- Փլուզումը տեղի է ունեցել 2020 թ. աշնանը, նախկին ԽՍՀՄ տարիների շահագործման փորվածքների հատվածում: Ընկերությունը իր կողմից որդեգրած քաղաքականությունից ելնելով նախատեսում է աշխատանքները իրականացնել 2 փուլով.

Առաջին փուլ՝ առաջացած դատարկության վերացում դատարկ ապարների տեղակայման միջոցով:

Երկրորդ փուլ՝ մակերևույթի ռեկուլտիվացում հողի բերրի շերտի տեղակայման և կանաչապատման միջոցով:

Արդյունքում կվերականգնվի ռելիեֆի անխափան տեսքը և կապահովվի տվյալ տարածքում շրջակա միջավայրի և բնակչության անվտանգությունը:

Հարց (Գոռ Թադևոսյան)- Բույսերի մասով ինչ որ բան նախատեսվե՞լ է:

Պատասխան (Աիդա Ալեքսանյան)- Տվյալ տարածքը բավականին փոքր տարածք է: Նախատեսվում է սիզախոտ ցանել, որի արմատային համակարգը խորը չէ և հետագայում, եթե տարածքը որպես արոտավայր օգտագործվի՝ վնաս չի հասցնի կենդանիներին:

Հարց (Գոռ Թադևոսյան)- Ինչքա՞ն է տարածքի չափը:

Պատասխան (Աիդա Ալեքսանյան)-Մոտ 1-2 հեկտարի շրջանակներում է:

Պատասխան (Արա Բարսեղյան)- Փլվածքը տեղի է ունեցել երկու ձագարաձև տարբերակներով, չափերը հեկտարով չեն, 11 մ խորություն ունեն, որը կենդանական աշխարհի տեղում լինելու պարագայում կարող է վտանգավորության աստիճան ներկայացնի: Անվտանգային առումով այդքան էլ մեծ փոսեր չեն, քիչ քանակությամբ դատարկ ապարների լցոնում կիրականացվի: Իսկ սիզախոտը հենց տարածքի խոտածածկն է: Այսպես ասած, եթե սիզախոտը անգամ չցանվի՝ միևնույնն է, շատ արագ ինքը կվերականգնվի, քանզի տարածքի սերմային վեգետացիոն շրջանը թույլ է տալիս դա:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Եթե այլ հարցեր չկան, ապա այսօրվա հանրային քննարկումը համարենք ավարտված: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

<u>Հանրային քննարկման պատասխանատու</u>
Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Ձեռնարկող՝</u>
«Չաարատ Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն **Դավիթ Թովմասյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>
Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>
Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**